

լեան Պրոսկայում, յուլիսի 27-ից մինչև 31-ը խօսքերայով հիւանդացի են 45, մեռել են 15, առողջացել են 7 հոգի:

Ամստերդամի ռուսաց հիւանդանոցը հաղորդում է օգոստոսի 1-ից, որ վերջին շաբաթում Մասսերիտում խօսքերայով հիւանդացի են 7, մեռել են 3, Ամստերդամում հիւանդացի են 6, մեռել է 1 հոգի:

Բելգիական կառավարութիւնը կարգադրութիւն արեց, որ Բալտիան ծովակի ռուսաց նաւահանգիստներին ծովային ճանապարհով ստացվող ապրանքների վերաբերմամբ գործարկվեն այն միջոցները, որ որոշված են Գրեյդէնի պայմանագրով:

Պորտուգալի կառավարութիւնը խօսքերայով վարակված յայտարարեց Պետերբուրգի և Նաւրայի ապրանքները:

Կրօնատարում մինչև օգոստոսի 2-ը մնացել էին 2 հիւանդներ, օգոստոսի 2-ին հիւանդացում 1 կին, առողջացողներ և մեռողներ չը կային, մեռել են 3 հիւանդներ: Ընդամենը, հիւանդութիւնը յայտնվելու օրից, յուլիսի 8-ից մինչև օգոստոսի 4-ը, հիւանդացի են 229, առողջացել են 135, մեռել են 91 հոգի:

Թիւրքիայի Ալբիանուպոլի նահանգում, բացի համանուն քաղաքից և Մուստաֆա-Փաշայի սահմանակից աւանից, ուրիշ ոչ մի տեղ չէ տարածված խօսքեր: Յուլիսի 26-ից մինչև օգոստոսի 4-ը խօսքերայից հիւանդացում 126, մեռան 58 հոգի, մեծ մասամբ զօրանողներում, իսկ Մուստաֆա-Փաշայում 8 հոգի հիւանդացան, որոնցից մեռան 6 հոգի: օգոստոսի 1-ից մինչև 2-ը:

Ահա խօսքերայից հիւանդացողներին և մեռնողներին ցուցակը Փոքր-Ասիայի զանազան վիլայէտներում: Բրուսայում, յուլիսի 22-ից մինչև 30-ը, հիւանդացել են 41, մեռել են 22: Ալեքսանդրիայում, յուլիսի 31-ից մինչև օգոստոսի 5-ը հիւանդացել են 19, մեռել են 11 հոգի: Սեզարեում, յուլիսի 24-ից մինչև 27-ը հիւանդացել են 2, մեռել է 1 հոգի: Կիր-Շէխիում, յուլիսի 25-ից մինչև 26-ը հիւանդացել է 1 հոգի: Կաստամուքում, յուլիսի 26-ից մինչև 30-ը հիւանդացել են 39, մեռել են 12: Կոնիայում, յուլիսի 25-ից մինչև 30 հիւանդացել են 22, մեռել են 19: Մալաթիայում, յուլիսի 24-ից մինչև 31-ը հիւանդացել են 10, մեռել են 9, Սիվասում, յուլիսի 17-ից մինչև օգոստոսի հիւանդացել են 40, մեռել են 22 հոգի:

ՆԱՄԱԿ ԱՍԻԱՅԻՍԻՅԵ

Օգոստոսի 8-ին

Նոր օրէնքի համաձայն, Ասիայիայի քաղաքային ինքնավարութիւնը փոխութեան է ենթարկվում: Այս տարի մտցվում է սահմանափակ քաղաքային ինքնավարութիւն, այնպէս որ քաղաքային խորհուրդը փոխվում է հաւատարմատարների ժողովի, քաղաքապետութիւնը՝ քաղաքային աւագութեան, իսկ մէջնաների աւագութիւնը՝ վերա-

համարեա բոլորը կամ ոճրադոր են կամ խելադար, կամ երկուսն էլ միասին: Կայ և մի այլ հակառակ կարծիք:

Խալիքան, Շիւքրարիան և Ֆրանսիան նոր օրէնքներ են յորհնում անարխիստների դէմ: Նվեյցաքական օրէնքները վաղուց էին մշակված, բայց նրանք միմայն անցեալ դարանը զննվեցին դաշնակցական պարլամենտներում: Վերջիններում նրանք ընդունվեցին համարեա թէ միաձայն: Ամուսնեա առաջարկվեց ժողովրդի referendum-ին: 90 օր նրանք ժողովրդի առջև էին, ժողովրդիցն էր կախված նրանց ընդունելը: Ներքինը, բայց ոչ դր, ոչ մի ձայն չը բարձրացաւ: Ոչ մամուլի և ոչ հասարակութեան կողմից: 90 օրը լրացաւ անցեալ յուլիսի 26-ին, referendum-ը տեղի չունեցաւ, հետեւաբար օրէնքները իրաւաբանական ոյժ ստացան: Նրանք, պէտք է խոստովանած, բաւական խիստ են:

Բայց քիչ համաձայնութիւն ֆրանսիական նոր օրէնքներին հետ, որոնք վերջին օրերս ընդունվեցին: Այդ օրէնքները մի այնպիսի ողով են կադմված, որ նրանցով կարելի է հարուածել այլ և ձայն, մեղաւորին և անմեղին, մեղապարտ անիշխանականին և խաղաղ, անմեղ քաղաքացուն: Ներքինը ֆրանսիական պարլամենտում և մամուլում մի այնպիսի կարեւոր, լուրջ վիճաբանութիւններ յարուցին, դա մի այնպիսի կարեւոր և ծանր

նում է և գործերը յանձնվում քաղաքային վարչութեանը:

Անցեալ ամսի սկզբներին քաղաքային վարչութիւնը տպագրել և ցրվել էր ընտրողական ցուցակը, սակայն պէտք է նկատել, որ այդ ցուցակը շատ թերի էր: շատ իրաւահաս անձինք բոլորովին զրկվել էին ձայն տալու իրաւունքից և այդ էլ չնորհւա այն բանի, որ պատերի վրա կայցրած յայտարարութիւնները անհասկանալի էին շատ շատերի համար, որովհետեւ տպագրված էին միմիայն ռուսերէն: Վերջերս նկատեցին, որ կազմված ընտրողական ցուցակը շատ թերութիւններ ունի, քաղաքային վարչութիւնը դիմեց նահանգապետին, որ օգոստոսի 7-ին նշանակված ընտրութիւնը յետաձգել, որպէս զի միջոց ունենան ճիշդ ընտրողական ցուցակ կազմելու: Սակայն պատասխանը բացասական եղաւ: Կազմած ցուցակով ընտրութեանը մասնակցելու իրաւունք ունենին մոտ 400 անձինք:

Նրէկ, ամսիս 7-ին, առաւօտեան ժամը 10-ին, ընտրողական ժողով կար քաղաքային վարչութեան դահլիճում: Ժողովին մասնակցում էին 70 անձինք: Նախագահում էր քաղաքապետը Տէր-Գրիգորեան: Ժողովը բանալով՝ նախագահը համառօտ կերպով բացատրեց սահմանափակ քաղաքային ինքնավարութեան կազմակերպութիւնը և կարգադրեց օրէնքի այն յօդուածները, որոնք վերաբերում էին ընտրողական ժողովին: Պատշաճաբար բացատրութիւնը տալուց յետոյ, առաջարկեց ընտրել 15 հաւատարմատարներ: Թերթիկներով թեկնաձեռներ առաջարկվեցին և որովհետեւ այդ թերթիկներին հաշուել բաւական երկար տեւեց, այդ պատճառով էլ ընտրութեան շարունակութիւնը յետաձգվեց մինչև երեկոյեան ժամը 5-ը: Երեկոյեան ժողովին մասնակցում էին 60 անձինք: Տուրքերով թուէրակվելու համաձայնութիւն յայտնեցին 35 հոգի, որոնցից ձայների առաւելութեամբ ընտրվեցին հետեւեալ անձինք: Նիկողայոս Տէր-Գրիգորեան, Գր. Մուսիսեան, Մանուկ Բալաբաբեկեան, Պ. Կիրիլսով, Բազը. Արաբաճեան, Յար. Ղազարոսեան, Գալիթ Բուսիսեան, Մանուկ Կանցեան, Յակոբ Ղազարեան, Մանուկ Գրիգորեան, Յակոբ Հայրապետեան, Սեդրակ Տէր-Կարապետեան, Մանուկ Մուսիսեան և Յարութիւն Ղազարեան: Երբ ժողովը Զիլիքարեան, Արաջանով (Նրէյ) և Միլտիշ Մուրադեան հաւատարմատարները ստանալով՝ պէտք է վիճակ գցվի, որին վիճակ ընկնի, նա կը լինի հաւատարմատար, իսկ մնացած երկուսը կը մնան կանդիդատներ: Օրէնքով պահանջվում է հաւատարմատարների 1/5 մասի չափ կանդիդատներ, բայց որովհետեւ այդ ընտրութեանը պահանջած թիւը չը լրացաւ, այդ պատճառով էլ կանդիդատներ ընտրելու համար երկուրդ անգամ ժողով պիտի գումարվի:

Ընտրված հաւատարմատարները նահանգապետից հաստատվելուց յետոյ, կը կատարվի քաղաքային աւագի ընտրութիւնը: Ի նկատի ունենալով ընտրված հաւատարմատարներին՝ կարելի է

ասել, որ քաղաքային աւագ կընտրվի ներկայ քաղաքապետին Նիկողայոս Տէր-Գրիգորեան: Սահմանափակ և հաւանական ենթադրութիւն է, թէ և խօսք կայ նաև Գր. Մուսիսեանի մասին:

Առ.—հանց

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Էջմիածին, օգոստոսի 9-ին
Վեհափառ Հայրապետն ստացեալ է զմի հարկուրուրի գումարն, առաքեալ ի հաւաքեալ զբաժնի ի խմբագրութեան «Մշակ» լրագրի ի նպաստ սովելոց:

Նորին Վեհափառութիւնն պատուիրեաց Գիւլան յայտնել ձեզ և ամենայն նուիրատուաց զիւրն գոհունակութիւն և օրհնութիւն:

Գիւլանազպիր՝ Խորէն Ծ. վարդ. Ստեփանէ

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, օգոստոսի 12-ին
«Արձագանք» լրագիրը վերջին ժամանակ անդադար կրկնում է, որ Քաղաքային եկեղեցու նախկին երեցիոյն պ. Գեորգ Աբիմեանց իր հաշիւները մաքուր և անթերի յանձնել է այժմեան երեցիոյն պ. Բ. Մէլիք-Ղազարեանցին և պահանջում է, որ այդ մասին հաշիւ ներկայացնի նոր երեցիոյնը: Այդ մասին «Մշակ» վերջին համարում տպվեց մի համառօտ հերքում, որ ասված էր, թէ պ. Աբիմեան նոյն իսկ շատ պաշտօնական թղթեր մինչև օրս դեռ չէ յանձնել նոր երեցիոյնին:

Թոյլ տուէք ինձ այդ համառօտ հերքումը լրացնել մի քանի տեղեկութիւններով, որ ես պարտաւոր եմ համարում հաղորդել հասարակութեան:

Անցեալ տարի, երբ Քաղաքային եկեղեցու ծերնակները ընտրեցին նոր երեցիոյն, ընտրեցին նաև մի մասնագիտ, պ. Աբիմեանի երկարամեայ չը քննված հաշիւները վերաստուգելու համար: Մասնագիտով անդամներն էին—պ. Գրիգոր Կիրակոսեան, Յ. Չաթախչեան և եւ: Մասնագիտով կողմից եւ դիմեցի Թիֆլիսի կոստիւմի մօտ տասնամեայ գործուէութեան հաշիւները: Ես ստացայ հինգ հատ բարակ մատնաներ, որ պարունակում էին պարոնի հնգամեայ, այն է՝ 1888—1892 թվերի հաշիւները իսկ նախնական հնգամեայի, թէ չորսամեայի, հաշիւները կոստիւմի մօտ մեզ չը տուեց, առաքելով թէ նրանք գտնվում են մեզանից առաջ ընտրված մասնագիտով անդամների մօտ: Ես խնդրեցի, որ դոնէ մեզ տան այն բոլոր թղթերը, որ վերաբերվում են պ. Աբիմեանի 1888—1892 թվերի գործուէութեանը: Բայց կոստիւմի մօտ, թէ, բացի այդ հինգ մատնաներից, իր մօտ ուրիշ ոչ մի թուղթ չը կայ և չէ ստացել պ. Աբիմեանից: Մասնագիտով անդամներից մէկը—պ. Կիրակոսեան, իր ժամանակի սղութեան պատճառով, և խօսքի աղաւթութեան:

Ամբողջը գլխաւոր կէտերը: Այդ օրէնքը նախ և առաջ անիշխանական պրոպագանդա անողների դատերը երեւոեաների դատարանից (jury) խելով, յանձնում է պոլիցիական պատժական ատենին, այդպիսով դատը տեղի է ունենում գրեթէ զուրկակ և աւելի խիստ կերպով: Բաւական է, որ մէկ հաղորդի մի անձի վերաբերմամբ իրը թէ նա արքայապետ է այս ինչ ֆրազան կամ նոյն իսկ մի բառ՝ անիշխանական մտքով, և ահա այդ անձնաւորութիւնը իսկոյն բանտարկվում է, գործը յանձնվում պոլիցիական պատժական ատենին: Նա այդպիսի բան չէ արտասանել, որ ինքը մի խաղաղ, անմեղ քաղաքացի է, ոչ մի կապ ոչ մի առնչութիւն չունի անիշխանականութեան հետ: Նոր օրէնքը արդեւում է անիշխանականների դատերի հրատարակութիւնը: Մենք դեռ չենք խօսում օրէնքի այլ յօդուածների մասին, մենք այստեղ առաջ բերեցինք երեք կէտ: Մէկը լրտեսում է. ճիշդ թէ սուտ, Աստուած գիտէ, անհասարակ բանտարկվում է, գործը համարաւ դռնփակ է զննվում, չը կայ մամուլի ներկայացուցիչ չը կայ ոչ մի հետաքննող, դատարանը իր բարեհաճ ցանկութեամբ անհատին ենթարկում է բանտարկութեան, տուգանքի կամ աքսորման (դէպի Աւստրալիայի կայէնա կղզին):

Մի և նոյն պայմաններում, մի և նոյն պատ-

հրատարակեց մեր նիստերին մասնակցելուց: Հաշիւները սկսեցինք զննել պ. Չաթախչեան և եւ: Պ. Աբիմեանի հաշիւները պահված են նահապետանների մի էջում գրված են եկամուտները, միւս էջում ծախսերը: Եկեղեցապատկան խանութները վարձողների հաշիւները գրված են խառնիխառն: Թէ ումից ինչքան է ստացված, պէտք է թրքել ամբողջ մատնանը: Պայմանագրեր չը կային մեր ձեռքի տակ, որ ստուգելիք խանութների վարձը: Ծախսերը գրված են դահաւան ձեռքով: Կան այնպիսի ծախսեր, որ գրված են մի ձեռքով և նոյն ծախսերի տակ նոյն ձեռքով ստորագրված են չստացայ: Օրինակ, «տուած է ուսումնարանի այս ինչ (անունը կայ) վարձագրերն 200 ռ.» և նոյն ձեռքով ստորագրված է «ստացայ», մի բան, որ օրինաւոր հաշուաւորութեան դէմ է: Մանր ծախսերի տակ գրված են ստորագրութիւններ, իսկ խոշոր ծախսերի տակ գրված է. «չոյ և ապահովագրի»: Այդ չոյ և ապահովագրի» նշանակում է, թէ պ. Աբիմեանը ունի իր արած խոշոր ծախսերը վաւարացող թղթեր (оправдательные документы):

Մասնագիտով, հարկաւ, պէտք է տեսնել այդ չոյ և ապահովագրերը, ուստի մի օր մասնագիտով կողմից եւ դիմեցի պ. Աբիմեանին, խնդրելով, որ նա յանձնի մեզ բոլոր իր չոյ և ապահովագրերը: Պ. Աբիմեան պատասխանեց, թէ նա ոչ մի մասնագիտով չէ ճանաչում և թէ իր հաշիւները վաղուց արդէն յանձնել է կոստիւմի մօտ: Ես կոստիւմի մօտ, ինչպէս ասեցի, մեզ յայտնել էր, թէ իր մօտ, բացի հինգ տկոր մատնաներից, ոչ մի թուղթ չը կայ: Յայտնի բան է, ոչ մի հաշիւ չէ կարելի զննել առանց վաւարացուցիչ զօկումենտների: Այնու ամենայնիւ, մասնագիտով ստիպված եղաւ հաշիւները զննել կամ ճիշդն ասել, պ. Աբիմեանի համար հաշուապահի դեր կատարել, կարգի բերել նրա խառնիխառն հաշիւները:

Մինչև այժմ մասնագիտով կարգի է բերել երեք տարւայ հաշիւները, մնում են երկու տարւանը: Սակայն մեզ անհրաժեշտ են վերոյիշեալ չոյ և ապահովագրերը: ասված զօկումենտները, որպէս զի վերաստուգենք պ. Աբիմեանի խոշոր ծախսերը: Անհրաժեշտ են նաև խառնիխառնների հետ կապված պայմանագրերը՝ խանութների վարձը ստուգելու համար: Մեզ մնում է երկուրդ անգամ պաշտօնապէս դիմել կոստիւմի մօտ: Ես խնդրեցի պ. Աբիմեանի զօկումենտները, եթէ միայն պարոնը նրանց յանձնել է կոստիւմի մօտ: Առայժմ, քանի որ մեր ձեռքի տակ չը կայ և ոչ մի զօկումենտ, պ. Աբիմեանի ոչ մի հաշիւ չէ կարող մեզ հաւատ ներշնչել, և մասնագիտով չէ կարող հասարակութեանը ասել, թէ Քաղաքային եկեղեցու հաշիւները պ. Աբիմեանի ժամանակ ճիշդ են պահված...

Մասնագիտով անդամ՝ Դերմանազադէ

Ժը գործ կը դնվի լրագրական և այլ հրատարակութեան վերաբերմամբ, երբ նրանք անիշխանական ողով են գրված: Կարծում էք, հնչում է ապացոյցանք, որ այս յօդուածը կամ այս ինչ դիրքը անիշխանականութեան հետ ոչ մի առնչութիւն չունի... Ահա ձեզ մի հարուած մամուլի աղաւթութեան: «Այդպիսով այդ նոր օրէնքը, ասում է մի լրագիր, ոչնչացնում է jury-ի հատարական իրաւաստութիւնը, որպէս զի իրաւունք տայ պատժական ատենաներին, որ սրանք՝ հիմնվելով միմայն շահախնդիր մատնութեան վրա, բանտարկութեան ենթարկել, աքսորել կայէնա մի քաղաքացու՝ մի ձառի, մի լրագրական յօդուածի համար... նոյն իսկ մի խօսակցութեան, մի երգի, մի նամակի, մի շարժումների համար»:

«Նոր օրէնքները, ասում է Էմիլ Զօլան, խլում են մեզանից մամուլի և խօսքի աղաւթութիւնը: նրանք մեզ վիրաւորում, մեզ հարուածում են: նրանք անօգուտ և աւելորդ են: Հասարակական դրութիւնն է առաջ բերում անիշխանականութիւնը: հարկաւոր է այդ դրութիւնը շտկել: Գուց ունեք մի ընդարձակ դաշտ, ուր վատ խոսք մեծանում է խնդրում է լաւբերին: Միթէ այդ որումը հեռացնելու համար բաւական է նրան հնձել: Պէտք է հողը նորոգել՝ նրան մշակելով: Մշակել հողը—սա այս է դարմանը»:

(Կը շարունակվի)

Типографія Бяпел. Главномач. Гражданск. частью на Кавказѣ, Лорисъ-Меликовская ул., д. кав.